

# ՄԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ



## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ՝  
2019Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ  
ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020  
փետրվար

2019թ-ին Սևան համայնքում աշխատանքներն ու ծրագրերն իրականացվել են՝ համաձայն համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի դրույթներին, 2019թ. տարեկան աշխատանքային պլանի, համայնքի 2019թ. բյուջեի՝ հաշվի առնելով համայնքի առկա ռեսուրսները, առանձնահատկությունները, զարգացման գերակա ուղղությունները, նախապես քարտեզագրված ծրագրային առաջնահերթությունները:

Իրականացված աշխատանքների շնորհիվ գրանցվել են հետևյալ արդյունքները՝ ըստ ոլորտների և ուղղությունների:

## **Արդյունք 1 - Բյուջեի եկամուտների պլանը կատարվել է 96.8%-ով**

### **Եկամուտներ**

Համայնքի 2019թ. տարեկան բյուջեի եկամուտների /վարչական և ֆոնդային բյուջեները միասին/ պլանը կատարվել է 96.8%-ով: 693.3մլն. դրամ պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 671.0մլն. դրամ, թերակատարումը կազմել է 22.3մլն. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի գծով առկա է 14.6մլն. դրամ եկամուտների գերակատարում, ֆոնդային բյուջեի գծով թերակատարումը 37.5մլն. դրամ է :

Նախորդ՝ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ համայնքի բյուջեն գերակատարվել է 16.8%-ով, կամ ավել եկամուտները կազմել են 96.3մլն. դրամ:

2019թ. տարեկան բյուջեի վարչական մասը կատարվել 102.6%-ով /պլան՝ 563.1մլն. դրամ, փաստացի՝ 577.7մլն. դրամ /: 2018թ. համեմատությամբ բյուջեի վարչական մասում ավել եկամուտները կազմել են 55.5մլն. դրամ կամ վարչական բյուջեի եկամուտները 2018թ. համեմատությամբ ավելացել են 10.6%-ով: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 107.9%-ով / պլան՝ 184.6մլն. դրամ, փաստացի՝ 199.2մլն. դրամ /: Նախորդ՝ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները գերակատարվել են 11.3%-ով, կամ սեփական եկամուտների հավաքագրումը ավելացել է 20.2մլն. դրամով:

Վարչական բյուջեի եկամտատեսակների գծով նախորդ տարվա համեմատությամբ գերակատարվել են փոխադրամիջոցների գույքահարկը 14.8մլն. դրամ /21.8%/, հողի հարկը՝ 0.6 մլն. դրամ /9.3%/, պետական տուրքերը՝ 1.9 մլն. դրամ /27.2%/, ոչ հարկային եկամուտները՝ 5.1մլն. դրամ /8.2%/, թերակատարվել են շինությունների գույքահարկը՝ 1.5մլն. դրամ /6.4%/, տեղական տուրքերը՝ 0.6մլն. դրամ /7.0%/:

2019թ. ընթացքում սեփական եկամուտների պլանը բացառությամբ հողի հարկի և տեղական տուրքերը գերակատարվել է հետևյալ եկամտատեսակների գծով՝ պետական տուրքեր, վարձավճարներ և տեղական վճարներ՝ ընդհանուր առմամբ՝ 17.8մլն. դրամի չափով: Թերակատարումների հիմնական պատճառը բնակչության և իրավաբանական անձանց վճարումների մակարդակի նվազումն է, որոնք ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքեր:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել է 79.3%-ով /ճշտված պլան՝ 181.2մլն. դրամ, փաստացի՝ 143.7մլն. դրամ/ : Նախորդ՝ 2018թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի փաստացի եկամուտներն ավելացել են ընդամենը 35.1մլն. դրամով կամ 32.3%-ով: Նման գերակատարումը պայմանավորված է 2018թ-ին պետական բյուջեից հատկացված 54.2մլն. դրամ սուբվենցիայով :

### **Ծախսեր**

Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 94.8%-ով: 696.9մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 660.4մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 36.5մլն. դրամ, կամ 5.2% :

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 98.9%-ով (պլան՝ 563.1մլն. դրամ, 556.8 մլն. դրամ փաստացի), թերակատարումը կազմել է 6.3մլն. դրամ: Վարչական բյուջեի փաստացի ծախսերի 45.4%-ը կամ 253.0մլն. դրամ կազմել են կրթության և մշակույթի ծախսերը, 115.2մլն.դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները (117.5մլն. դրամ՝ սանիտարական մաքրման ծախսեր (21.1%):

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2019թ. տարեկան բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով. կրթության ծախսերը՝ 99.3% , մշակույթի ծախսերը՝ 94.0%:

2018թ. համեմատությամբ 2019թ. վարչական բյուջեի ծախսերը ավել են կատարվել 34.9մլն. դրամ կամ 6.7%-ի չափով:

2019թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել է 83.4%-ով (պլան՝ 184.8մլն. դրամ, փաստացի ծախս՝ 154.1մլն. դրամ): Նախորդ՝ 2018թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի գծով ավել ծախսերը կազմել են 45.5մլն. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ ֆոնդային բյուջեի ծախսերը ավելացել են 41.9%-ով:

Ֆոնդային բյուջեի ծախսերի կատարումը 50.4մլն. դրամի չափով ապահովվել է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 50.4մլն. դրամի չափով ֆոնդային բյուջե հատկացման հաշվին, կամ ֆոնդային բյուջեի ծախսերի 32.7%-ը ապահովվել է ոչ կապիտալ՝ ընթացիկ եկամուտների հաշվին:

Համայնքի 2019թ. ֆոնդային բյուջեից վճարվել է 137.9մլն. դրամ /այդ թվում 33.5մլն. դրամի չափով նախորդ տարիների պարտք/ ասֆալտապատման, փոսային հիմնանորոգման համար: 14.9մլն. դրամի չափով կատարվել են փողոցային լուսավորության ցանցի կառուցման ծախսեր:

Իրականացվել է շուրջ 104.4մլն. դրամի ասֆալտապատման աշխատանք:

### **Պարտքեր**

2019թ. հունվարի 1-ի դրությամբ պարտքերը եղել են 54.5մլն. դրամ:

Բյուջետային գործառնություններից դուրս պարտքեր չկան: 2019թ. ընթացքում մարվել է 30.8մլն. դրամ պարտք, այդ թվում՝ 23.5մլն. դրամ ճանապարհների հիմնանորոգման, 0.1մլն. դրամ՝ նախագծային աշխատանքների մասով:

2019թ. ընթացքում նոր պարտքեր են կուտակվել 30.8 մլն. դրամի չափով, այդ թվում՝ վարչական բյուջեի գծով 4.4 մլն. դրամ, ֆոնդային բյուջեի գծով 26.4մլն. դրամ, որից 23.8մլն. դրամը փողոցների փոսային հիմնանորոգում:

2020թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի պարտքը կազմում է 50.7մլն. դրամ, այդ թվում՝ 18.3մլն. դրամը՝ համայնքի ֆոնդային բյուջեի գծով. 2014-2016թթ-ից տեղափոխված ասֆալտապատման աշխատանքների գծով պարտքեր:

## **Արդյունք 2 - Հողի հարկ և գույքահարկ**

Համայնքի վարչական տարածքում գտնվող շենք- շինությունների համար գույքահարկի տարեկան պլանը նախատեսված է եղել 24.0մլն դրամ: Հավաքագրումը կազմել է 24.6մլն. դրամ /102.3%/:

Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկի հավաքագրումը, ըստ պլանային թվի, եղել է 9.0մլն. դրամ: 2019թ-ին հավաքագրվել է 7.3մլն. դրամ /81.2%/, փոխադրամիջոցների գծով գույքահարկի վճարումը կատարվել է 116.7%-ով. պլանային 71.0մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 82.8մլն. դրամ:

Առևտրի և սպասարկման գծով տեղական տուրքերի՝ պլանավորված 9.0մլն դրամի դիմաց կատարողականը կազմում է 7.3մլն. դրամ:

Պետական տուրքի գծով նախատեսված 7.1 մլն. դրամի դիմաց մուտքագրվել է 9.1մլն. դրամ /128.0%/:

### Արդյունք 3 - Նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների ֆինանսավորում և ծախսային մասեր

Համայնքում գործում է 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Մանկապարտեզներում ծնողական վճարները զրոյացված են, և ֆինանսավորումն ամբողջությամբ կատարվում է համայնքի կողմից

Հ/Հ		2019թ-ին ճշտված ֆինանսավորման պլան	Փաստացի ֆինանսավորում	Տոկոսը
1	Նախադպրոցական կրթություն ընդամենը, որից	151.7	150.5	99.2
	թիվ 1 «Բողբոջ» մ/մ	31.0	31.0	100.0
	թիվ 2 «Զարթոնք» մ/մ	26.8	26.5	98.9
	թիվ 3 «Հեքիաթ» մ	43.5	43.1	99.1
	թիվ 4 «Գալիք» մ/մ	35.0	35.0	100.0
	«Գագարին» մ/մ	15.4	14.9	96.8
2	Արտադպրոցական կրթություն ընդամենը	75.9	75.4	99.3
3	Մշակույթի գծով ՀՈԱԿ-ներ	19.1	18.6	97.4
	Ընդամենը 10 ՀՈԱԿ-ի գծով	246.0	244.5	99.4

### Արդյունք 4 - Քաղաքաշինություն

2019թ-ին աճուրդային կարգով օտարվել է 19619.97քմ մակերեսով հողատարածք, որից՝ 2834.15քմ-ը՝ բնակելի կառուցապատման, 16785.82քմ-ը՝ հասարակական կառուցապատման համար. համայնքային բյուջե է մուտքագրվել 17.034.459հազ. դրամ:

Շարունակվել է ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման գործընթացը: Ընդունվել է համայնքի ղեկավարի 138 որոշում, համաձայն որի՝ օրինականացվել են ավտոտնակ, տաղավար, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող վարչական շենքերում, բնակարաններում օրինականացվել են ինքնակամ կատարված ձևափոխման աշխատանքները:

Ընդունվել է հասցեի տրամադրման 143 որոշում, համայնքային բյուջե է մուտքագրվել 143.000 դրամ:

Տրվել է 40 շինարարական թույլտվություն, համայնքային բյուջե է մուտքագրվել 232.100 դրամ, տրվել է ճարտարապետահատակագծային 51 առաջադրանք:

Կայացվել է համայնքի ղեկավարի 47 որոշում հողի ուղղակի վաճառքի վերաբերյալ:

Կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ 10 գործ, որի մասով համայնքի բյուջե է մուտքագրվել 2.400.000 դրամ:

### Արդյունք 5- Անցկացվել է 7 Ներքին աուդիտ

Անցկացվել է 7 ներքին աուդիտ՝

1. «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ
2. «Սևանի թիվ 1 «Բողբոջ» մ/մ» ՀՈԱԿ
3. «Սևանի թիվ 3 «Հեքիաթ» մանկ.» ՀՈԱԿ
4. «Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ
5. «Գագարինի մ/մ» ՀՈԱԿ /արտահերթ/

6. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժին
7. համայնքապետարանի գնումների համակարգման գործընթաց

## **Արդյունք 6 - Ճանապարհաշինություն, երկու սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հիմնովին ասֆալտապատվել է 3 փողոց**

Համայնքային առաջնահերթություն ներկայացնող ճանապարհաշինարարական աշխատանքների ծավալը Սևան համայնքում 2019-ին էլ զգալի էր, որը մեկնարկեց ապրիլ ամսին՝ փոսային նորոգմամբ:

Մեկնարկը տրվեց Նաիրյան փողոցից, որին հաջորդեցին շուրջ մեկտասնյակի հասնող փողոցների ասֆալտբետոնյա ծածկույթների քայքայված տեղամասերի փոսային նորոգման աշխատանքները:

Սևանի Սայաթ-Նովա, Ս. Սևանեցի, Գրիբոյեդով, Նալբանդյան, Աբովյան, Էներգետիկների, Հրազդան, ինչպես նաև Գագարին գյուղի Թումանյան, Բաղրամյան և Կոմիտաս փողոցներն ստացան նոր տեսք՝ ապահովելով ավտոմեքենաների և մարդկանց անվտանգ տեղաշարժն ու երթևեկը:

Փոսային աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 2194քմ: Գործընթացն իրականացվել է համայնքային բյուջեի միջոցներով:

Հիշյալ աշխատանքներին զուգահեռ համայնքում իրականացվել է նաև միաշերտ ասֆալտապատում՝ 1530քմ, որը ևս համայնքային բյուջեով է իրականացվել:

2019թ.-ին իրականացվել է նաև ճանապարհաշինարարական երկու սուբվենցիոն ծրագրի՝ «Սևան համայնքի Չարենց փողոցի ասֆալտբետոնե ծածկույթի հիմնանորոգում /Ելենովկա-Չարենց փողոցների խաչմերուկից մինչև Շահումյան-Չարենց փողոցների խաչմերուկն ընկած հատված/», «Սևան համայնքի 5-րդ միկրոթաղամասի և Գագարին գյուղի ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների իրականացում»:

«Սևան համայնքի 5-րդ միկրոթաղամասի և Գագարին գյուղի ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների իրականացում» ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 48385,92 հազ. դրամ, որից 19354,308 հազ. դրամը՝ համայնքային ֆինանսավորմամբ /40տոկոս/:

«Սևան համայնքի Չարենց փողոցի ասֆալտբետոնե ծածկույթի հիմնանորոգում /Ելենովկա-Չարենց փողոցների խաչմերուկից մինչև Շահումյան-Չարենց փողոցների խաչմերուկն ընկած հատված/» ծրագրով ավարտվեց քաղաքի Չարենց փողոցի ամբողջական հիմնանորոգումը, որի առաջին փուլն իրականացվել էր համայնքի միջոցներով, երկրորդ փուլը՝ սուբվենցիոն ծրագրով 2018թ.-ին: Երրորդ փուլի իրականացման համար ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 42000,0 հազ. դրամ, որի 40 տոկոսը եղել է համայնքային ներդրում՝ 16800,0 հազ. դրամ:

Սուբվենցիոն այս ծրագրով միաշերտ ասֆալտապատվել է 12260քմ:

## **Արդյունք 7 - Իրականացվել է երկու Վարձատրվող հասարակական աշխատանքներ ծրագիր**

«Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» ծրագրի շրջանակներում իրականացվել է երկու ենթածրագիր՝ «Սևան քաղաքի Գործարանային փողոցի թիվ 2 բազմաբնակարան շենքի արեւմտյան հասցեում գտնվող անցուղու

նորոգում եւ բարեկարգում», «Սևան քաղաքի Նահրյան փողոցի թիվ 104 առանձնատնից արեւելք գտնվող եւ Չարենցի փողոցը միացնող աստիճանահարթակի բարեկարգում»:

Յուրաքանչյուր ծրագրի արժեքը 1մլն. 500 հազ. դրամ է, ևս 10 տոկոս համայնքային ներդրումն է, սակայն համայնքը երկու ծրագրերի իրականացման համար էլ ներդրումների չափը ավելացրել է՝ պայմանավորված աշխատանքների ծավալով:

Աշխատանքներում ներգրավվել են չորսական բանվոր:

Ծրագրերի իրականացմամբ ապահովվեցին հիշյալ հատվածների բարեկարգ և ներակայանալի տեսքը, հետիոտների անցուղարձի մատչելիությունը:

## **Արդյունք 8 - Ներդրումային և բարեգործական ծրագրերի շրջանակներում**

Համայնքում իրականացվող բարեփոխումների, զարգացումների առանցքում կարևորվում են ներդրումային ծրագրերը: Այն, ինչը հնարավոր չէ կյանքի կոչել միայն տեղական բյուջեի միջոցների հաշվին, դառնում է իրատեսական կառավարության, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ:

Սևանի թիվ 2 «Զարթոնք» մանկապարտեզը հիմնանորոգումից հետո՝ 2019թ. ապրիլի 1-ին, անցավ իր բնականոն աշխատանքին: Հիմնանորոգման աշխատանքներն իրականացվեցին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և համայնքի համագործակցությամբ:

Ծրագրի արժեքը 215մլն. էր, որից 15մլն.-ը ներդրել է համայնքը: Հիմնանորոգմանը հաջորդել են կահավորման աշխատանքները, որի մի մասը համայնքային ներդրում է: Մանկապարտեզին աջակցել է նաև Focus on Children Now /Ֆոքուս օն չիլդրեն նաու, ինկ/ բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը՝ ի դեմս ծրագրերի ղեկավար Անահիտ Քալանթարյանի շուրջ 1.5մլն. դրամ արժողությամբ անկողնային պարագաներ, սպիտակեղեն, հիգիենայի միջոցներ, բազմատեսակ խաղալիքներ են նվիրաբերվել մանկապարտեզին:

«Հայ դպրոց» հիմնադրամի ներկայացուցիչները 2019թ-ին հերթական այցը կազմակերպեց Գագարինի մանկապարտեզ: Մանկապարտեզին նվիրաբերվեց գույք՝ ուսուցչական սեղան և աթոռ, գրատախտակ, 17 կոմպլեկտ նախադպրոցական սեղան-աթոռ /յուրաքանչյուրը՝ 1 սեղան, 4 աթոռ/, 17 հատ նախադպրոցական պահարան:

Գագարին գյուղում նախորդ տարի սկսվեց և ընթացքի մեջ է Գագարինի մշակույթի տան հիմնանորոգումը, որն իրականացվում է հանրապետության մարզերում առաջնահերթություն համարվող ծրագրերի շրջանակներում՝ Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից: Սևանի համայնքապետարանը համաֆինանսավորում է ծրագիրը և ծրագրի մեկնարկի համար հատկացրել է 3մլն. 768 հազ. դրամ:

Հրատապ ծրագրերի շրջանակներում իրականացվել են Գագարինի միջնակարգ դպրոցի տանիքի, թիվ 5 և թիվ 6 միջնակարգ դպրոցների հիմնանորոգման աշխատանքները:

Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի շենքի հիմնանորոգման աշխատանքները գտնվում են վերջին փուլում, որն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով: Քաղաքի մշակութային կյանքում այս ծրագրի շնորհիվ կարձանագրվի դրական փոփոխություն, որը հիմնավորապես կփոխի Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատում իրականացվող աշխատանքների որակը և այդ շենքում գործող մի շարք կազմակերպությունների աշխատանքային պայմանները:

Այս ծրագրերին զուգահեռ Սևանի քաղաքային զբոսայգու հարևանությամբ արդեն գործում է ֆուտբոլի մարզադաշտը: Մարզադաշտի առկայությունը միաժամանակ

ենթադրում է ֆուտբոլի դպրոցի հիմնում, ֆուտբոլային ավանդույթների վերականգնում, ինչպես նաև արդեն «Սևան» անունը կրող ֆուտբոլի թիմի տնային խաղերի անցկացում:

Քանի որ ապագա դպրոցը գտնվում է քաղաքային զբոսայգու հարևանությամբ, շինարարական հիմնական աշխատանքներին զուգահեռ բարեկարգվել են նաև քաղաքային այգու տարածքը:

## **Արդյունք 9 - Գործում է Սևանի բիզնես կենտրոնը**

Սևան համայնքում իրականացվում է «ԵՄ-ն Սևանի համար՝ բիզնեսի զարգացման և նորամուծության ՓՄՁ հարթակ» ծրագիրը՝ ԵՄ համաֆինանսավորմամբ, որը մեկնարկել է 2018թ-ին:

Ծրագրի նպատակն է զբաղվածության, որակի, կայունության, անվտանգության և աշխատաշուկայի որակական աճի վրա բազմակողմանի ազդեցության միջոցով նպաստել համայնքում և ողջ տարածաշրջանում կայուն տնտեսական աճի արձանագրմանը:

Սևանն անդամակցում է «Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» ծրագրին և դրա շրջանակներում էլ ներկայացրել է հաջողված և մրցունակ առաջարկ:

Բիզնես կենտրոնի միջոցով իրականացվող ծրագիրն էլ հավակնում է ունենալ տեսանելի արդյունք, քանի որ առաջնահերթություններ են ընտրված մի շարք կարևոր ուղղություններ՝ ֆիզիկական ենթակառուցվածքների տրամադրում բիզնես համայնքին, համագործակցություն և կապերի ուժեղացում խորհրդատվական և տեխնիկական աջակցություն գործարարներին և աշխատանք փնտրողներին:

Գեղարքունիքի մարզի համար այս կենտրոնը դարձել է ինկուբատոր, որտեղ ամեն օր մշակվում են գաղափարներ ու տարածվում:

«ԵՄ-ն Սևանի համար՝ բիզնեսի զարգացման և նորամուծության ՓՄՁ հարթակ» ծրագրի առանցք հանդիսացող բիզնես կենտրոնը նախորդ տարի իրականացրել է մեծածավալ աշխատանք, մասնավորապես՝ աշխատանքային հանդիպումների կազմակերպում, բիզնեսի զարգացման խորհրդատվություն և դասընթացների կազմակերպում, բիզնես և ռազմավարական պլանավորում, նորարարության տեղայնացում, բիզնես պլանների մշակում:

Սևան համայնքը ծրագիրն իրականացնում է Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատի հետ:

Բիզնես կենտրոնում աշխատում է 8 հոգի, որոնք իրականացնում են մասնագիտական գործունեություն:

## **Արդյունք 10 - Սևանն արժանացել է «Տարվա գործարար կառույց» անվանակարգին**

2006թ-ից, Հայաստանի համայնքների միության ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախաձեռնությամբ, անցկացվում է «Լավագույն համայնք» մրցանակաբաշխությունը:

Այս տարի էլ՝ նոյեմբերի 10-ին՝ Տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 23-րդ տարեդարձին նվիրված ընդունելություն էր կազմակերպվել, որն արդեն դարձել է ավանդական: Ընդունելությունն ամփոփվեց մրցանակաբաշխությամբ:

«Լավագույն համայնք 2018»-ի մրցանակակիր Սևան համայնքն այս տարի էլ ներկայացավ «Տարվա գործարար կառույց» անվանակարգում՝ ներկայացնելով Սևանի բիզնես կենտրոնի գործունեությունը, գրանցված հաջողությունները:

Մրցանակաբաշխության ընթացքում Սևան համայնքի ներկայացուցիչներին հանձնվեց «Տարվա գործարար կառույց» անվանակարգում հաղթողի հավաստագիրը:

## **Արդյունք 11 - Ընդլայնվել է գիշերային լուսավորության ցանցը**

Կարևորելով գիշերային Սևանի անվտանգությունն ու հարմարավետությունը՝ 2019թ-ին ևս լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքները դարձան օրակարգային:

Քաղաքի տարբեր հատվածներում՝ ԼՃափնյա, Թումանյան, Հովհ. Շիրազ, Ելենովկա, Աշոտ Երկաթ փողոցներ, բակային և փողոցներին հարող տարածքներ, Ցամաքաբերդ թաղամասի Իսակովի, Մարգալետունի փողոցներում, Ազատության փողոց 2-րդ նրբանցքում, Գոմաձոր թաղամասի Սունդուկյան և Երիտասարդական փողոցներում իրականացվեցին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ:

Աշխատանքները կատարվել են համայնքային բյուջեի միջոցներով, հատկացվել է 11մլն. 243 հազ. դրամ: Հիշյալ փողոցներում և տարածքներում, որը ընդգրկում է 4.5կմ ընդհանուր տարածք, լուսավորության ցանց չի եղել, և օրակարգային այս խնդիրը ընթացիկ տարում ստացավ վերջնական լուծում:

Տեղադրված լամպերի զգալի մասը LED լամպեր են, որոնք շահեկանորեն տարբերվում են և լուսավորությամբ, և էներգախնայողությամբ:

Աշխատանքների հաջորդ փուլը իրականացվեց Նաիրյան և Խաղաղության փողոցներում:

Այստեղ 126 լուսատու փոխարինվեց LED-երով, որը լավագույն երաշխիք է գիշերային քաղաքի գլխավոր փողոցների ներկայանալի տեսքի ապահովման:

Այս աշխատանքները ևս իրականացվում են համայնքային բյուջեի միջոցներով՝ 5մլն. 268 հազ. դրամ:

Հիշյալ աշխատանքներին զուգահեռ լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքներ են կատարվել Գագարին գյուղի Գայի փողոցի 1-ին հատվածում, ինչպես նաև Շինարարների փողոցի 3, 5 շենքերի և Նալբանդյան փողոցի 40ա շենքի ընդհանուր բակային տարածքում: Նշենք, որ հիշյալ հատվածներում լուսավորության ցանց չի եղել:

Այս աշխատանքների իրականացմամբ Սևան համայնքի երեկոներն ու գիշերներն կլինեն լուսավոր, փողոցներն ու բակերը կդառնան ապահով, մարդկանց շարժն ու ավտոմեքենաների երթևեկը՝ անվտանգ: Միաժամանակ LED լամպերի տեղադրմամբ և փոխարինմամբ համայնքային բյուջեի խնայողություններն այս ոլորտում կլինեն տեսանելի:

## **Արդյունք 12 - Ավելացել են բնակֆոնդի պահպանությանն ուղղված աշխատանքները**

Բնակֆոնդի պահպանությունը համայնքային առաջնահերթություններից է, և չնայած այն հանգամանքին, որ բազմաբնակարան շենքերը գտնվում են համատիրությունների կազմի մեջ, տեղական իշխանությունները մշակել են ծրագրեր, որոնց շնորհիվ լուծվում են շենքերի հետ կապված առկա խնդիրները:

Մասնավորապես՝ ներկայացված աշխատանքների ծավալին տեղում ծանոթանալուց հետո հատկացվում է ֆինանսական աջակցություն կամ տրամադրվում է նյութատեխնիկական օգնություն: Երկու տասնյակից ավել շենքերում մի քանի ամսվա ընթացքում հնարավոր է եղել լուծել տարիներով կուտակված մի շարք խնդիրներ:



Աբովյան 15 - շենքի նկուղային հարկի ընդհանուր կոյուղագծից մինչև դիտահոր հիմնանորոգման աշխատանքներ.

Նաիրյան 153 / 12 - տանիքի վերանորոգում.

Գագարինի զբոսայգի - վերանորոգում.

Նալբանդյան 63 շենք, 4-րդ մուտք - ընդհանուր կոյուղագծի վերանորոգում.

Սայաթ-Նովա 26 - ջրահեռացման և կոյուղատար խողովակների վերանորոգում և փոխարինում.

Կարմիր բանակ 35 - արևմտյան ճակատի պատի պանելների միացման հանգույցների բետոնացում և տանիքի մասնակի վերանորոգում.

Սայաթ-Նովա 22 - նկուղային հարկի ընդհանուր կոյուղագծի նորոգում.

Շահումյան 37 շենք - 2-րդ մուտքի վերանորոգման աշխատանքներ

Նալբանդյան 38 շենք - տանիքի մասնակի վերանորոգում

Սայաթ-Նովա 19, 25 շենքեր - կոյուղագծի վերանորոգում

Գրիբոյեդով 6 շենք - տանիքի մասնակի վերանորոգում

Նալբանդյան 34 շենք - կոյուղու մասնակի վերանորոգում

Սարգիս Սևանեցի 27 շենք - ջրագծի մասնակի վերանորոգում

Կարմիր բանակի 1, 2, 3 շենքեր - կոյուսագծերի ընդհանուր վերանորոգում

Սայաթ-Նովա 24 շենք - կոյուղագծի մասնակի վերանորոգում

Գործարանային 2 շենք - ջրագիծ, կոյուղագիծ վերանորոգում

Սարգիս Սևանեցի 13 շենք - կոյուղագծի վերանորոգում

Գրիբոյեդով 9 շենք - տանիքի մասնակի վերանորոգում

### **Արդյունք 13 - Ծրագրերը շարժիչ ուժ են**

Սևան համայնքը մայիսի 11-ին մասնակցել է «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի» բիզնես ֆորումին՝ ներկայանալով համայնքում գործող սոցիալական ձեռնարկատիրությունների հաջողություններով, գործարար գաղափարներով և արդեն իսկ կյանքի կոչված ծրագրերով:

Դեռևս 4 տարի առաջ Սևան համայնքի համար մեկնարկել է ևս մեկ կարևոր՝ «Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարում» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի կողմից: Ծրագրի առանցքում աղբահանության խնդիրների կարգավորումն է:

Ծրագիրն ունի մի քանի բաղադրիչ և հեռահար նպատակներ, որն ընդգրկում է բնապահպանական և սոցիալական գործողություններ, նոր աղբավայրի շահագործում, մաքրության ծառայությունների դիմաց վճարների հավաքագրման նոր մեխանիզմներ, նոր և ժամանակակից տեխնիկայի, մասնագիտացված սարքավորումների տրամադրում:

2016թ.-ից Սևանն անդամակցում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ուսումնառող քաղաքներ» ցանցին և 2019թ. ներկայացրել է եռամյա հաշվետվություն կատարված աշխատանքների, փորձի և փորձառության վերաբերյալ:

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը Սևան համայնքում իրականացրեց «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» երկամյա ծրագիրը, որը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից:

Ծրագրի շահառուները երիտասարդներն էին, ովքեր ներգրավված էին համայնքի զարգացման ծրագրերում: 2019թ.-ին իրականացվեցին կյանքի է կոչվել «Շարժական ART GALLERY» և «Սովորում ենք լուսանկարչություն» ծրագրերը, որոնց նպատակն էր՝ նպաստել երիտասարդ արվեստագետների, ստեղծագործողների

ինքնաարտահայտմանը, հանրային ճանաչմանը, ինչպես նաև համայնքի մշակութային կյանքի աշխուժացմանը:

## **Արդյունք 14 - Տասնհինգամյա ապակենտրոնացված համագործակցության հերթական տարին**

Սևան-Գրենորֆ ապակենտրոնացված համագործակցությունը 15-ամյա կենսագրություն ունի:

2019թ. մարտ-ապրիլ ամսիներին համայնքում անցկացվել են ֆրանկոֆոնյան օրեր՝ բազմաբնույթ միջոցառումներով, նախաձեռնություններով: Հունիսին մեկնարկել են ֆրանսերենի ուսուցման ամառային դպրոցի դասերը:

Շարունակվում է համագործակցված աշխատանքը այլընտրանքային էներգիայի ներդրման ճանապարհին:

Ծրագրի նպատակն է զարգացնել վերականգնվող էներգիան Սևանի տարածաշրջանում:

Պիլոտային ծրագրերին զուգահեռ իրականացվում է 3 տարվա ընթացքում վերադարձելիության սկզբունքով գործող ֆինանսավորման ծրագիրը, որի շրջանակներում սեփական առանձնատներում և բնակարաններում տեղադրվել և տեղադրվելու են արևային ջրատաքացուցիչներ և ջեռուցման համակարգ:

Ծրագրի բաղադրիչներից է նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների շենքերում ջրատաքացուցիչների տեղադրումը:

Էներգիանայողության այս արդյունավետ քայլն ունի նաև բնապահպանական նշանակություն, որի ուղղությամբ առաջիկայում էլ Սևան համայնքում իրականացվելու են նոր ծրագրեր, արդեն կան նախնական պայմանավորվածություններ:

Սևան և Գրենորֆ քաղաքների միջև համագործակցային ուղղություններից մեկը՝ առողջապահականը, նախորդ տարիներին գրանցել է լուրջ հաջողություններ՝ կյանքի կոչված ծրագրերի տեսքով՝ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում, բժշկական կենտրոնում վերանորոգման, կահավորման, տեխնիկական վերազինման և մասնագիտական վերապատրաստման ծրագրեր:

Բոլորող 15-ամյա համագործակցությունը գործընկերային շրջանակի մեջ է ներառել Գեղարքունիքի մարզը, Ֆրանսիայի Հանրապետության Իզերի մարզի դեպարտամենտի խորհուրդը: 2018 թվականի ընթացքում սկսված, սակայն տարբեր պատճառներով անավարտ մնացած ծրագրերն ավարտին հասան 2019թ-ին:

## **Արդյունք 15 - Վերանորոգված ամբուլատորիա Գագարինում**

Գագարին գյուղում, վերանորոգվել և կահավորվել է ամբուլատորիայի համար նախատեսված տարածքը, որի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ դեկտեմբեր ամսին:

Գրենորֆի քաղաքապետարանի ֆինանսավորմամբ և ֆրանսիական «Բժշկական օգնություն եւ զարգացում» ասոցիացիայի օպերատորությամբ ֆրանսիայից անցյալ տարի ստացվել է բուժսարքավորումների հերթական խմբաքանակը՝ տեսողությունը ստուգելու ակնոց՝ նախատեսված ապակիներով, ճեղքային լամպ, ռեֆրակտոմետր, պոլիսոքսիմետր /թթվածնով հագեցվածությունը ստուգելու սարք/, որը հանձնվել է բժշկական կենտրոնին: Համայնքի մանկապարտեզների բուժկետերն էլ ստացել են նախապես պատվիրված գույքը և անհրաժեշտ սարքավորումները:

## **Արդյունք 16 - Համագործակցության համաձայնագիր**

2020թ-ին նոյեմբերին Սևան համայնքի պատվիրակությունը պաշտոնական այցով գտնվում էր Գրենորլ քաղաքում, որտեղ էլ ստորագրվեց Սևան և Գրենորլ քաղաքների միջև 2020-2022թթ. համագործակցության Համաձայնագիրը:

## **Արդյունք 17 - Կգործարկվի Ուսանողական երկու ավտոբուս**

Սևան համայնքին Գրենորլի քաղաքապետարանի և տեղի հայ համայնքի կողմից նվիրաբերվել է երկու ավտոբուս:

Հիշյալ ավտոբուսները ծառայելու են Սևան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին՝ ապահովելով նրանց փոխադրումը Սևան-Երևան-Սևան ուղղություններով:

Ավտոբուսների փոխադրման ծախսը հոգացել է Գրենորլի Հայկական մշակույթի տունը: Յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի տեղափոխման ծախսը կազմում է 7500 եվրո, ընդհանուրը՝ 15000 եվրո:

Այս տարվանից ավտոբուսները կգործարկվեն:

## **Արդյունք 18 - Համագործակցության հուշագիր, Պրահա-Վինոր այգու բացում**

Անցյալ տարի՝ հոկտեմբերին, Սևանը հյուրընկալեց քույր քաղաք Պրահա-Վինորի պատվիրակությանը՝ փոխքաղաքապետ Ռոբերտ Ռիտինայի գլխավորությամբ՝ բարերար Արամ Մարությանի ուղեկցությամբ: Քույր քաղաքների ներկայացուցիչների հանդիպմանը մասնակցում էր ՀՀ-ում Չեխիայի դեսպան Բեդրիխ Կոպեցկին:

Այցի ընթացքում ստորագրվեց համագործակցության Հուշագիր, ինչպես նաև տեղի ունեցավ Պրահա-Վինոր այգու բացման հանդիսավոր արարողությունը:

## **Արդյունք 19 - Մաքուր Սևան**

Համայնքի համար կենսական նշանակություն ունի կոմունալ տնտեսության բնականոն գործունեությունը: Մենք այս ոլորտում ունենք կոնկրետ նպատակներ՝ ունենալ այնպիսի կառույց, որը կհամակարգի կոմունալ տնտեսության ոլորտի գործառույթները՝ աղբահանումից մինչև կանաչապատում, սանմաքրման աշխատանքների կազմակերպումից մինչև լուսավորության ցանցի գործարկում:

Կոմունալ տնտեսության աշխատանքներում գրանցվել են էական տեղաշարժեր:

Ձմռան ամիսներին իրականացվող աշխատանքների առանցքում ձյան մաքրումն ու տեղափոխումն էր:

Ուշադրության կենտրոնում համայնքի ողջ տարածքն էր՝ գլխավոր փողոցից մինչև երկրորդական փողոցներ, Գոմաձոր, Ցամաքաբերդ թաղամասերը, Գագարին գյուղը: Ձնամաքրման աշխատանքները շարունակվել են նաև հանգստյան օրերին: Ձյան տեղումներին զուգահեռ իրականացվել է մաքրման գործընթացը:

Մաքրմանը հաջորդել է ճանապարհների՝ ավագով մշակման գործընթացը, որի արդյունքում երթևեկության և հետիոտնի տեղաշարժի համար ապահովվել է բնականոն վիճակ:

Գարնանը աշխատանքների ուղղվածությունը փոխվել է՝ առանցքում մնալով մաքրությունը: Էտման և սանիտարական հատման աշխատանքներին հաջորդել են ծառերի բների սպիտակեցման, կանաչ տարածքների խնամքի, ձևավորման աշխատանքները:

Ամռան ընթացքում կոմունալ տնտեսության աշխատանքների ծավալը կրկնապատկվել է՝ պայմանավորված առափնյա գոտում իրականացվող տնտեսական գործունեությամբ, քաղաք այցելողների և զբոսաշրջիկների աճով:

Քաղաքում ավելացել են նաև աղբամանները:

Կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպման նպատակով համայնքային բյուջեից հատկացվել է 121669.0 հազ. դրամ՝ սանմաքրման, աղբահանության իրականացման, կանաչապատման, գիշերային լուսավորության ցանցի շահագործման, վերելակների գործարկման և ընթացիկ այլ աշխատանքների համար: Աղբահանության ծառայությունների դիմաց հավաքագրվել է 24847.7 հազ. դրամ:

Սևան համայնքն ակտիվորեն մասնակցել է «Մաքուր Հայաստան» նախաձեռնությանը: Համայնքում անցկացվել է 2 համապետական, 1 մարզային շաբաթօրյակ: Մասնակիցների թիվը հասնում էր մի քանի հազարի, ներգարվել է նաև անհրաժեշտ քանակով տեխնիկա:

## **Արդյունք 20 - Բնակֆոնդի պահպանությունն առաջնահերթություն է**

2003թ-ից բնակարանային տնտեսության կառավարումը իրականացվում է համատիրությունների միջոցով:

Համայնքում գործում է 5 համատիրություն, որից մեկը՝ Գազարինում: Դրանց միջոցով իրականացվում է 213 բազմաբնակարան շենքերի կառավարումը, սպասարկումն ու պահպանումը:

Շենքերի զգալի մասը մեկից ավելի հիմնախնդիրներ ունի՝ սկսած տանիքներից մինչև ներքին խողովակաշարեր, որոնց ուղղությամբ իրականացվում են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Իհարկե, դեռևս հեռու ենք շոշափելի արդյունքներից, սակայն տեղական իշխանությունները ձգտում են և ֆինանսական ներդրումների շնորհիվ և կազմակերպչական հարցերը լուծելիս կանգնել համատիրությունների նախագահների կողքին:

Զնայած համայնքապետարանն իր գործառույթների շրջանակներում իրավասու չէ նման խնդիրները լուծելու, շենքերն էլ համատիրության կազմում են, և բնակիչներն ունեն իրենց ոչ միայն իրավունքներ, այլ նաև պարտականություններ, սակայն հաշվի առնելով սոցիալական վիճակը, բնակչին չենք կարող թողնել իրենց խնդիրներին դեմ առ դեմ:

Շատ եմ կարևորում այն հանգամանքը, որ համատիրությունների նախագահները իրենց գործունեության ընթացքում ոչ միայն մշտական կապի մեջ լինեն տեղական իշխանության հետ, այլ նաև բնակիչների՝ իրենց աշխատանքները դարձնելով թափանցիկ, հաշվետվողական: Աշխատանքային փորձը և շփումները ցույց են տալիս, որ բնակիչը իրեն չի զգում շենքի սեփականատեր: Դրա վկայությունն է նաև բաժնային սեփականության պահպանման նպատակով նախատեսված հավաքագրումների ցածր մակարդակը:

Բազմաբնակարան շենքերի համատեքստում կա ևս մեկ խնդիր՝ կապված բազմահարկ 29 շենքերի հետ, որոնք վերաբերում են վերելակների սպասարկմանը և գործարկմանը:

Համայնքապետարանը խնդրին լուծում տալու նպատակով, վերելակների անվտանգ և անխափան գործարկումն ապահովելու համար վերելակների սպասարկման գործառույթները հանձնել է «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ին:

## **Արդյունք 21 - Սևանում գործելու է մանկական վերականգնողական կենտրոն**

Համայնքում 2019թ.-ի 1-ին կիսամյակում իրականացվել է «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագիրը՝ «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից: Ծրագիրը թիրախավորել է սոցիալական ոլորտը և նպաստել ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և ընտանիքների սոցիալական խնդիրների վերհանմանը և դրանց լուծմանն ուղղված մեխանիզմների բարելավմանը՝ մշակելով բարելավման առաջարկություններ:

6 ամսյա տևողությամբ ծրագրի ընթացքում ստեղծվել են ինստիտուցիոնալ երկխոսության և համագործակցության հարթակ ՔՀԿ-ների և պետական մարմինների միջև, «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանության ցանց» կոալիցիայի միջոցով, որտեղ պետական և հասարակական հատվածները ոչ միայն երկխոսելու են, այլև մշակելու և իրականացնելու են համատեղ ռազմավարություններ և ծրագրեր:

Տեղական ինքնակառավարման մարմինները, համագործակցելով սոցիալական աջակցության տարածքային գործակալության հետ, այս ծրագրի շրջանակներում և ենթադրվում է՝ նաև հետագայում կատարելու են դեպքերի վարում, կազմելու են բազմաշահագրգիռ սոցիալական ծրագրեր:

Ծրագրի մեկնարկից առաջ ստորագրվել է համագործակցության Հուշագիր Սևան համայնքի և «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի միջև:

2019թ.-ից Ջինիշյան հիշատակի հիմնադրամի աջակցությամբ Սևան քաղաքում սկսվել է մանկական վերականգնողական կենտրոնի գործարկման աշխատանքները: Համայնքի ավագանու կողմից անհատույց տարածք է հատկացվել կենտրոնի գործունեության համար: Երկամյա ծրագրից հետո՝ 2021թվականից առողջապահության նախարարությունը իր վրա կվերցնի այդ կենտրոնի ֆինանսավորումը:

Այդպիսով, Սևանի տարածաշրջանի մոտ 100 երեխաներ կստանան իրենց անհրաժեշտ վերականգնողական բուժօգնությունը հենց տեղում:

Ծրագրի թիրախը Սևան համայնքն է և տարածաշրջանի գյուղական համայնքները:

Կենտրոնի հիմնական գործառույթներն են մասնագիտացված ցերեկային խնամքի կենտրոնի միջոցով հաշմանդամություն և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների համար մասնագիտացված աշխատանքների իրականացում, որի շնորհիվ էականորեն կբարելավվի նրանց կյանքի որակը: Կենտրոնում աշխատելու է 12 հոգուց բաղկացած անձնակազմ:

Սոցիալական ծրագրերի շարքում առանցքային է աջակցության տրամադրումը սոցիալապես անապահով խավին:

2020թ. համայնքի կողմից սոցիալական աջակցության գումարը կազմել է 11.228.800 դրամ:

Անցած ամսիներին պարզավճարներ են հատկացվել զոհված ազատամարտիկների մայրերին, կանանց, տեղական և միջազգային մրցաշարերից հաղթանակով վերադարձած մարզիկներին, նրանց մարզիչներին:

## **Արդյունք 22 - Ավելացել է փաստաթղթաշրջանառությունը**

Սևանի համայնքապետարանի աշխատակազմում ամփոփվել է 2019թ.-ի փաստաթղթաշրջանառությունը: Համաձայն աշխատակազմի կողմից տրամադրված տվյալների՝ 2019թ.-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին համայնքի ղեկավարին է դիմել 1419 քաղաքացի: 2018-ի նույն ժամանակահատվածում դիմողների թիվը եղել է 1129: Բազմաբնույթ դիմումների շարքում գերակշռող են սոցիալական ուղղվածություն ունեցողները, որոնց, ինչպես նաև մյուս դիմումներին, օրենքով սահմանված կարգով տրվել է սպառիչ պատասխան:

Իրավաբանական անձանցից, ՀՈԱԿ-ներից, համայնքում գործող կազմակերպություններից, ընկերություններից, հաստատություններից ստացվել է 718 գրություն: Նախորդ տարի նույն ժամանակահատվածում այդ թիվը կազմել է 620:

Գեղարքունիքի մարզպետարանից, գերատեսչություններից, միջազգային և տեղական կազմակերպություններից ստացվել է 704 գրություն, տեղեկատվության տրամադրման հարցում: 2018թ-ին այդ թիվը եղել է 620:

Բոլոր հարցումներին տրվել է պատասխան, եղել են նաև ուղղորդումներ:

Համայնքապետարանից ուղարկված գրությունների թվային պատկերն այսպիսին է՝ համայնքի ներսում՝ 617, նախորդ տարի այդ թիվը եղել է 394, համայնքից դուրս՝ 597՝ նախորդ տարվա 498-ի դիմաց:

Գրությունների, դիմումների մուտքը և ելքը կատարվել է էլեկտրոնային, փոստային և առձեռն եղանակներով:

### **Արդյունք 23 - Ավագանին կայացրել է 49 որոշում**

Տեղական ինքնակառավարումն առանց ավագանու գործունեության չի կարող լինել լիարժեք: Մենք խնդիր ունենք առավել համագործակցված և լայնաշերտ աշխատելու ավագանու հետ, որպեսզի կայացրած որոշումներն էլ լինեն արդյունավետ և նպաստեն համայնքային կյանքի բոլոր ոլորտների բնականոն աշխատանքին:

2019-ի համայնքի ավագանին գումարել է 7 նիստ, կայացրել է 49 որոշում:

Ավագանու գործունեության թափանցիկության և հրապարակայնության նպատակով նիստերը հեռարձակվում են առցանց, ապա տեղադրվում պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

### **Արդյունք 24 - Ակտիվացել է քաղհասարակության հետ համագործակցությունը**

Քաղաքացիական հասարակության ստեղծման ճանապարհին անհրաժեշտ է բոլոր այն կառույցների ու կազմակերպությունների գործունեությունը, որոնք հնարավորություն կտան մեր աշխատանքները դարձնել առավել ժողովրդավար, թափանցիկ և ընկալելի:

Համայնքապետարանն աշխատում է համայնքում գործող ՀԿ-ների և ասոցիացիաների հետ, միասին հեղինակում են համաքաղաքային միջոցառումներ, հանդիպումներ:

Համայնքապետարանի պատասխանատուները բազմիցս են մասնակցել ՀԿ-ների աշխատանքային հանդիպումներին և սեմինարներին, ներկայացրել տարբեր ոլորտներում մշակված ծրագրերը:

Բավականին ակտիվ է կապը համայնքում գործող հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ: Կարևորելով քաղաքացիական հասարակության դերը՝ մեր գործունեությունը կառուցում ենք գործնական - ընկերային հարթության վրա, որը բավականին արդյունավետ է նաև համայնքում այդ կազմակերպությունների կողմից համայնքային կարիքների բացահայտման, առաջնահերթությունների որոշման և զարգացման ծրագրերի ներդրման համար, համատեղ միջոցառումներ և քննարկումներ կազմակերպելիս:

## **Արդյունք 25 - Նախադպրոցական ուսումնական հաստատություններն աշխատում են լրիվ ծանրաբեռնվածությամբ և անվճար են**

Համայնքային կյանքի բաղկացուցիչ մասն են կազմում համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց նպատակային և ամենօրյա գործունեության շնորհիվ հնարավոր է դառնում կազմակերպել երեխաների նախադպրոցական կրթության, դաստիարակության, մարզական, մշակութային ուղղվածության ծրագրերը:

Պայմանավորված մշակույթի պալատի հիմնանորոգմամբ՝ ժամանակավորապես չեն գործում այդտեղ տեղակայված ՀՈԱԿ-ները՝ Հովհ. Այվազովսկու անվան արվեստի դպրոցը, Վ. Ստեփանյանի անվան գրադարանների կենտրոնացված համակարգը և համայնքային մշակութային կենտրոնը:

Համայնքի 5 նախակրթարաններն աշխատում են ծանրաբեռնվածությամբ՝ իրականացնելով երեխաների նախադպրոցական կրթության, դաստիարակության, խնամքի, անվտանգ միջավայրի ապահովման գործառույթները: Նախադպրոցական այս հաստատություններն ապահովում են պահանջվող չափորոշիչները:

2017թ. մարտի 1-ից մանկապարտեզներում ծնողական վարձավճարները գրոյացվել են, որը նաև իմ նախընտրական ծրագրերի դրույթներից է: Սոցիալական այս ձեռնարկի շնորհիվ երեխաների համար ստեղծվել են հավասար պայմաններ: 2019-ին համայնքային բյուջեից մանկապարտեզներին հատկացվել է 150.5 հազ. դրամ /ամփոփը ներկայացված է համայնքի ՆՈՒՀ-երի ֆինանսավորում բաժնում/:

Համայնքում գործում են նաև նախակրթարաններ, որոնցից մեկը «Բողբոջ» մանկապարտեզի հենքի վրա, երկուսը՝ Ցամքաբերդի և Գոմաձորի միջնակարգ դպրոցների հենքի վրա:

Անցյալ տարի միջինացված տվյալներով համայնքի մանկապարտեզներ և նախակրթարաններ են հաճախել 620 երեխա:

2019-2020 ուստարում մանկապարտեզներից 1-ին դասարան է հաճախել 256 երեխա:

## **Արդյունք 26 - Ավելացել են մարզական ձեռքբերումները**

2019-ին մարզաշխարհում գրանցվել են մի շարք ձեռքբերումներ:

Ն. Դագարյանի անվան մարզադպրոցում աշխատանքները թևակոխել է մի նոր փուլ: Ընթացող ամենօրյա պարապմունքները, դպրոցում տեղի ունեցող առաջնությունները, ինչպես նաև մեր մարզիկների լավագույն մրցելույթները հանրապետությունում և արտերկրում դրա լավագույն վկայությունն են:

Մարզադպրոցի սաները մասնակցել են մարզային հանրապետական և միջազգային առաջնությունների, մրցումների՝ դառնալով մրցանակակիրներ, նվաճելով պատվավոր հորիզոնականներ:

«Յունիոր Սևան» ֆուտբոլային թիմը դարձել է ՀՀ 2018-2019թթ. ֆուտբոլային առաջնության 1-ին խմբի բացարձակ հաղթող:

ՀՀ նախագահի մրցանակի համար անցկացվող «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի 1-ին փուլում հաղթող ճանաչվեց թիվ 4 «Գալիք» մանկապարտեզի թիմը, և 2-րդ մրցանակակիր թիվ 1 «Բողբոջ» թիմի հետ մասնակցեց մարզային փուլում:

Մարզական աշունը բավականին հազեցած էր: «Դինամո» մարզադաշտում կայացավ Հայաստանի թաեքվոնդոյի կադետների առաջնություն, որին մասնակցում էր նաև Սևանի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի սան Արսեն Քոլոզյանը:

Մարզիչ Արման Գրիգորյանի սանը 57կգ քաշային կարգում ցույց տվեց լավագույն արդյունք և գրավեց 1-ին մրցանակային տեղը:

Հաջորդ լուրը հեռավոր Շվեդիայից էր, որտեղ տեղի ունեցավ թաեքվոնդոյի Եվրոպայի առաջնություն:

Մինչև 21 տարեկանների Հայաստանի հավաքականի կազմում մասնակցում էր նաև Սևանի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի սան, 63կգ քաշային Դավիթ Թորոսյանը, ով արժանացել է պատվավոր 1-ին մրցանակի՝ ավելացնելով իր մեդալառատ զինանոցը ևս մեկ ոսկով:

Մարզական ևս մեկ միջոցառում անցկացվեց սեպտեմբերին: Մարզական փառատոնը ազդարարվեց շքերթով, որին հաջորդեց մրցութային մասն ընդգրկող մարզաձևերի անցկացումը:

Փառատոնի մրցանակակիրներն արժանացան պարգևատրումների:

Տարեվերջին ՀՀ ԿԳՄՄ նախարարության կողմից համայնքն արժանացավ շնորհակալագրի մարզական փառատոնի կազմակերպման և անցկացման համար:

Վրաստանի մայրաքաղաք Թիբիլիսիում անցկացված պատերիֆտինգի (ուժային եռամարտ) IPSU աշխարհի առաջնությանը Սևանի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի մարզիկները հանդես եկան լավագույնս:

Պատանիների պայքարում 1-ին պատվավոր հորիզոնականը գրավեց Ռազմիկ Հովսեփյանը, իսկ մինչև 23 տարեկաներ պայքարում աշխարհի չեմպիոն հռչակվեց Հայկ Արզումանյանը:

Հոկտեմբերի 11-ի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի մարզիկ և մարզիչ, աշխարհի կրկնակի չեմպիոն, Դյուցազնագրքի կրկնակի ռեկորդակիր, միջազգային կարգի սպորտի վարպետ, մեր համաքաղաքացի Վարազդատ Հակոբյանը սահմանեց նոր ռեկորդ՝ նա միջնամատով քաշեց 23 տոննա կշիռ ունեցող գնացքը:

Անցյալ տարվա դեկտեմբերին մարզադպրոցը ներկայացավ տարեվերջյան հաշվետվությամբ, որի ընթացքում խրախուսվեցին լավագույն մարզիկները:

## **Արդյունք 27 - Նոր շունչ՝ մշակութային միջոցառումներին**

Տոնացույցում նշված համապետական բոլոր օրերը համայնքում նշվել են հավուր պատշաճի, որին մասնակից են դարձել համայնքի բնակիչները, համայնքում հյուրընկալվածները: Պայմանավորված մշակույթի պալատի հիմնանորոգման աշխատանքներով՝ միջոցառումներն անցկացվել են եղել են բացօթյա: Համայնքը մասնակցել է նաև «Արի պարի Քոչարի» համահայկական ֆլեշմոբին, որի կազմակերպիչը եղել է Գրենորի հայկական համայնքը:

Սևանի թերակղզու տարածքում առաջին անգամ անցկացվեց «Էկո Ֆիշ Ֆեսթ» ձկան փառատոն, որը մեկնարկեց Սևանա լճի ամբողջ շրջակայքը մաքրելու գործընթացով և դարձավ զբոսաշրջային գտործի խթանման արդյունավետ քայլերից մեկը:

Սևանի պատվիրակությունը տարվա ընթացքում մասնակցել է հանրապետական և մարզական հնչեղություն ունեցող միջոցառումներին՝ ապրիլի 27-ին Գավառում կայացած «Քաղաքացու օր» տոնակատարությանը, սեպտեմբերի 21-ին Գյումրիում կայացած Անկախության օրվան նվիրված միջոցառումներին, հոկտեմբերի 26-ին կայացած «Մեծ փուռ» փառատոնին:

Սևանի Վ. Մարգարյանի անվան երաժշտական դպրոցի սաները ևս ընթացիկ պարապմունքներին զուգահեռ մասնակցել են «Արտ մյուզիք» երաժշտական փառատոնին՝ գրավելով մրցանակային տեղեր, արժանանալով գրանպրիի:

Երաժշտական դպրոցի երգչախումբը մասնակցել է «Երգող Հայաստան» փառատոնի մարզային փուլին և ճանաչվել է հաղթող:

Սևանի համար իրադարձային էր ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության փորձագիտական հանձնաժողովի կողմից Սևան համայնքի վարչական տարածքում գտնվող Հայաստանի գրողների միության Սևանի հանգստյան տանը հանրապետական, իսկ Նաիրյան փողոց 17 հասցեում գտնվող բնակելի տանը տեղական նշանակության նորահայտ հուշարձանների կարգավիճակ տանը:



## **Արդյունք 28 - Մեկնարկել է «Թող լինի ծառ» ծառատունկը**

Համայնք 2019թ.-ին, համագործակցելով «Սևան» երիտասարդական ակումբ» ՀԿ-ի հետ, սեպտեմբեր և նոյեմբեր ամիսներին կազմակերպել է ծառատնկման աշխատանքներ, որոնք կրելու են շարունակական բնույթ և նպաստելու են քաղաքի կանաչ տարածքների ավելացմանը:

## **Արդյունք 29 - Նոր համագործակցության ակնկալիքով**

Ունենալով ապակենտրոնացված համագործակցության զգալի փորձ՝ համայնքը պատրաստակամ է նոր համագործակցություններ սկսելու և ընդլայնելու աշխարհագրությունը:

2019թ. ապրիլին Շվեդիայի Թագավորությունից ժամանած պատվիրակությունը՝ քաղաքապետ Բոել Սեպիլիա Գոնդերի գլխավորությամբ, հյուրընկալվեց նաև Սևանում:

Հանդիպման ընթացքում ներկայացվեցին երկու քաղաքների զարգացման միտումները, առանձնահատկությունները, հնարավորությունները, առկա ծրագրերը, մասնավորապես՝ զբոսաշրջային հեռանկարները և ներդրումային ուղղությունները:

Սևան այցի նպատակն էլ, ինչպես նշեց տիկին Գոնդերը, այս տարածաշրջանին ծանոթանալն էր, որին կհետևեն հետագա քայլերի քննարկումները: Այդ քայլերի արդյունքում ակնկալվում է Սևան - Սոդերթալյե քաղաքների միջև գործընկերային հարաբերությունների հաստատում:

Համագործակցության հաջորդ առաջարկը Իսպանիայից էր: Իսպանիայի թագավորությունում ՀՀ Դեսպան Վլադիմիր Կարմիրշայանը հայաստանյան որևէ քաղաքի հետ համագործակցության կապեր հաստատելու համար առաջարկել է Սևանի թեկնածությունը, որը համայնքն ընդունել է ամենայն պատասխանատվությամբ և ոգևորությամբ:

Սևան համայնքն իր զարգացման, զբոսաշրջային գործի, տնտեսության բարելավման և կրթական ծրագրերի իրականացման առաջնահերթություններում էապես կարևորում է միջազգային կապերի ամրապնդումը քույր քաղաքներ ձևաչափով:

Բարձր գնահատելով համագործակցային հարաբերությունների հաստատումը, այն բոլոր ծրագրերի իրականացումը, որոնք միտված են ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, միմյանց ավելի լավ ճանաչելուն, ազգային շփումները խորացնելուն՝ սիրով ընդառաջել ենք Իսպանիայի Ալիկանտե քաղաքի հետ համագործակցության առաջարկությանը՝ քույր քաղաքներ հռչակելու Համաձայնագրի ստորագրումը համարելով գերակա:

Այս տարի առաջարկները կստանան գործնական տեսք:

## **Արդյունք 30 - Առաջնահերթություն է տրվել հաշվետվողականությանը**

Թափանցիկ աշխատանքի ձևավորման ճանապարհին իրականացվող ծրագրերի շարքում առանձնանում է համայնքապետարանում գործող «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ» ծրագիրը, որն առավել ամբողջական և համակարգված է դարձնում իրականացվող աշխատանքները:

Համայնք-մարզապետարան-կառավարություն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային տարբերակը թույլ է տալիս աշխատանքները դարձնել առավել որակյալ, ռավել սեղմ ժամկետում փոխանցել համապատասխան տեղեկատվությունը:

Աշխատանքների առավել արդյունավետության նպատակով, մասնագիտական որակավորման և հմտությունների ապահովման համար աշխատակազմի համայնքային ծառայողներն անցել են ատեստավորում, մասնակցել որակավորման և վերապատրաստման դասընթացների: Համայնքն ունի իր պաշտոնական կայքէջը և ֆեյսբուքյան էջը:

Տեղական իշխանությունն իր աշխատանքները կառուցում է՝ գերակա համարելով համայնքապահպան ու համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը:

